Արձանագրություն N 2

Առողջապահության նախարարության 2026 թվականի կարիքների համար էլեկտրոնային աճուրդով, տպագրական աշխատանքների ձեռք բերման նպատակով «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՇՁԲ-2026/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրություն

ք. Երևան «06» «Հուլիսի» 2026թ.

ժամը 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Հ. Խուրշուդյան
Հանձնաժողովի անդամներ	Ն. Դանիելյան, Ա. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար	Ն. Ղազարյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Խուրշուդյան)

Ընդունել ի գիտություն, որ 22.06.26թ. հրապարակվել է հրավեր eauction.armeps.am համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2026 թվականի հուլիսի 3-ին, ժամը 14:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2026 թվականի հուլիսի 5-ին, ժամը 14:00-ին:

2026 թվականի հուլիսի 6-ին ժամը 11:00-ին հրավիրվել է գնահատող հանձնաժողովի նիստ՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՇՁԲ-2026/1» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերը գնահատելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը՝

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ	hardendsoft@mail.ru	01220372
2	«Մոնոպրինտ» ՍՊԸ	Monoprint1@mail.ru	01844711

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Խուրշուդյան)

Մասնակիցների կողմից ներկայացված հրավերով պահանջվող փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Խուրշուդյան)

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Հ. Խուրշուդյան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 05.07.2026 թվականին կայացած հակադարձ աճուրդի ավարտից հետո ներկայացվում են կից ֆայլով (excel):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Հ. Խուրշուդյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփում

(Հ. Խուրշուդյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՇՁԲ-2026/1» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագրեր՝

- «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով՝ 270,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՇՁԲ-2026/1» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած

- 1-ին չափաբաժնի մասով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՇՁԲ-2026/1» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 07.07.2026թ.-ից մինչև 17.07.2026թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Խուրշուդյան

Անդամներ՝ ---------- Ն. Դանիելյան

---------- Ա. Գրիգորյան

Քարտուղար՝ ---------- Ն. Ղազարյան